1992	11.6	11.2	0.4
1993	10.6	16.6	-6.0
1994	14.2	15.2	-1.0
1995	14.2	9.5	4.7

Ուստի բացասական զարգացումները կասեցնելու համար ԼՂՀ-ում պետական մակարդակով առաջ քաշվեց գործընթաց, որով սկսվեց պարբերաբար իրականացվել հասարակության, ընտանիքի, անհատի ուսումնասիրություն, որը հնարավորություն ընձեռեց գնահատել առկա ժողովրդագրական իրավիճակը և բացահայտել նրա վրա ազդող գործոնները:

Արդ, ստեղծված ծանր կացությունից դուրս գալու համար ԼՂՀ իշխանությունները հիմնականում փորձեցին իրականացնել հետևյալ իրարահաջորդ գործողությունները.

1. ճանաչել ճգնաժամն առաջացնող խորքային պատճառները,
2. վերլուծել իրադրությունը,
3. մշակել նառաջարկել ճգնաժամը հաղթահարելու միջոցներ,
4. կիռարել այդ միջոցները:

Հետևաբար 1994թ. մայիսին՝ զինադադարի հաստատվելուց հետո, կարևորագույն խնդիրներից էր հանրապետության սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական պատկերի կայունացման և զարգացման հարցը:

Վերոնշյալ հետպատերազմյան սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական համալիր գործընթացների արդյունքները կներկայացվեն հերթական հոդվածներում:

Այսպիսով՝ 1988-94 թվականներին ստեղծված քաղաքական, սոցիալ-տնտեսական մեկը մյուսին արագաթափ հաջորդող իրավիճակները, թե՛ օբյեկտիվ և թե՛ սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, նորանկախ պետության իշխանությունների համար առաջ բերեցին բոլորովին նոր մարտահրավերներ, որոնց լուծումները, ցավոք սրտի, ծրագրված և համակարգված բնույթ չէին կրում, որն էլ, բնականաբար, իր բացասական ազդեցությունը թողեց Արցախի ընդհանուր ժողովրդագրական պատկերի վրա:

Տեղեկություններ հեղինակի մասին

Սարգիս Ասատրյան – ԱրՊՀ ասպիրանտ, պատմության ամբիոն
E-mail: sargis_asatryan_2014@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ. Ավանեսյանը:

ՀՏԴ 941 (479.25) *Հայոց պատմություն*

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՈՒՆԵՑԱԾ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՍԿԶԲԻՆ

Կարինե ՀՈՎՍԵՓՅԱՆ

Բանալի բառեր՝ *Արևմտյան Հայաստան, Կայսերական Գերմանիա, Հայկական հարց, արևմտահայեր, Կ. Պոլիս, Օսմանյան կայսրություն, Հանս Ֆոն Վանգենհայմ, հյուպատոսներ, դիվանագետներ, երիտթուրքեր:*

Ключевые слова: *Западная Армения, Кайзеровская Германия, Армянский вопрос, западные армяне, Константинополь, Османская империя, Ганс Фон Вангенгайм, консул, дипломаты, младотурки.*

Key words*: Western Armenia, Imperial Germany, Armenian issue, Western Armenians, Constantinople, Ottoman Empire, Hans Von Vangenhaym, consul, diplomats, the Young Turks.*

К. Овсепян

Западная Армения и Германия накануне и в начале первой мировой войны

В данной статье обсуждается позиция кайзеровской Германии в отношении западных армян накануне и в начале первой мировой войны. Всестороннее исследование фактов показывает,что для Германии главным вопросом являлся вопрос сохранения статус кво Турции, а также увеличения своего влияния на западных армян. Но накануне первой мировой войны высокопоставленным лицам Германии был известен план изгнания западных армян со стороны младотурок, и они не только не препятствовали, но в отдельных случаях активным образом участвовали в организации и осуществлении этого плана.

K. Hovsepyan

Western Armenia and Germany on the Eve and in the First Period of the World War I.

The problem discussed in this article concerns Germany's attitude to the western Armenians on the eve and during the first period of the World War I. The detailed analysis of the facts shows that the main problem for Germany was maintaining Turkey's status quo and increasing its impact on the Armenians. But high officials of Germany knew about the Young Turks' plan of the Armenians' deportation, and not only didn't try to stop that plan, but in some cases even actively took part in the organization and realization it.

Հոդվածում քննարկվում է Առաջին աշխարհամարտի սկզբին Կայսերական Գերմանիայի դիրքորոշումը արևմտահայերի նկատմամբ: Փաստերի համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Գերմանիայի համար կարևոր էր Թուրքիայի ստատուս քվոյի պահպանումը, ինչպես նաև իր ազդեցության մեծացումը արևմտահայերի շրջանում:

Առաջին աշխարհամարտի սկզբին Գերմանիայի բարձրաստիճան պաշտոնյաներին հայտնի էր երիտթուրքերի կողմից արևմտահայերի տեղահանության ծրագիրը: Սակայն նրանք ոչ միայն արգելք չհանդիսացան, այլև առանձին դեպքերում ակտիվորեն մասնակցեցին այդ ծրագրի կազմակերպմանն ու իրականացմանը:

Հայոց Ցեղասպանության ընթացքում Կայսերական Գերմանիայի դերակատարության ուսումնասիրման տեսանկյունից կարևոր է Առաջին աշխարհամարտի նախօրեին արևմտահայության նկատմամբ գերմանական ղեկավարության ունեցած մտադրությունների վերհանումը: Այն հնարավորություն է ընձեռում ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու Հայոց ցեղասպանության վերաբերյալ, ուսումնասիրելու այդ հարցում գերմանական իշխանությունների վարած քաղաքականության շարժառիթները, ինչպես նաև նպաստելու 20-րդ դարի առաջին ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին:

19-րդ դարի վերջին և հատկապես 20-րդ դարի սկզբին գնալով ուժեղանում էր Գերմանիայի ազդեցությունը Թուրքիայի վրա, սակայն այն նկատելիորեն մեծացավ երիտթուրքերի՝ 1908 թվականին իշխանության գալուց հետո[1]: Եթե Անգլիան, Ֆրանսիան մեծ ներդրումներ էին կատարել Թուրքիայի տնտեսության ոլորտում, ապա երիտթուրքերի իշխանության տարիներին գերմանացիները կարողացան ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական և ռազմական ծանրակշիռ ներկայություն ապահովել այդ երկրում, ինչի վկայությունն էր 1913 թվականի մայիսի 22-ին երիտթուրքական կառավարության պաշտոնական հրավերով Կ.Պոլիս ժամանած գերմանական նոր զինվորական առաքելությունը Լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ[2]:

Արևմտյան Հայաստանում տնտեսական ծանրակշիռ ազդեցություն ունենալով՝ Կայսերական Գերմանիան ձգտում էր պահպանել այդ տարածքները թուրքական պետության կազմում, սակայն նրա

[1] *Տե՛ս Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Եր., 1965, էջ 126:*

[2] *Տե՛ս Фирбюхер Генрих, Армения 1915, Уничтожение Турцией культурного народа, (ответственный редактор и автор передисловия Вардгес Микаелян), Ереван, 1991. էջ 62:*

հաշվարկները ավելի հեռուն էին գնում, ինչի մասին է վկայում դեռևս 1913 թվականի սկզբին Կ.Պոլսում գերմանական դեսպան Մանդելշտամի զեկուցագիրը, որում ասվում էր. «Եթե հետագայում պարզվի, որ Թուրքիայի փլուզման գործընթացը այլևս հնարավոր չի լինի դադարեցնել, մեզ համար մեծ արժեք կունենա Փոքր Ասիայում մեր իրավունքների իրականացման պարագայում մեր մեջքին ունենալ հայկական տարրը»[1]: Սա նշանակում է, որ մերձավորարևելյան իր քաղաքականության իրականացման տեսանկյունից Գերմանիան մեծապես կարևորում էր հայկական գործոնը՝ այն դիտելով ոչ թե խոչընդոտ գերմանական շահերի ընդլայնման ճանապարհին, այլ, ընդհակառակը, ճիշտ քաղաքականության իրականացման պարագայում՝ դրական գործոն: Այս իմաստով հետաքրքիր տեսակետ է արտահայտել Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմը՝ Գերմանիայի արտգործնախարար ֆոն Յագովին 1913թ. հունիսի 5-ին գրած զեկուցագրում. «…Առանց Հայկական հարցը լուծելու անհեռանկարային է ցանկացած քաղաքականություն, որն ուղղված կլինի թուրքական տիրապետության պահպանմանը: Եթե գործը հասնի բաժանմանը, ապա հայերը մեզ հարկավոր կլինեն մեր դիրքերի ամրապնդման համար... Հյուպատոսները պետք է լինեն այնպիսի մարդիկ, ովքեր անմիջապես կկարողանան մարտական գործողությունների մեջ մտցնել ոստիկանությունը կամ ռազմական ջոկատը: Այդ պատճառով անհրաժեշտ է՝ նշված վայրերում լինեն օտարերկրացի սպաներ՝ օժտված կառավարման լծակներով… Եթե, օրինակ, Ադանայում գտնվեր գերմանացի մայոր՝ հրամանատարի կարգավիճակով, ապա այնտեղ չէին լինի նման անկարգություններ... Հայկական հարցի լուծումը հիմնականում վերաբերում է ճանապարհների և երկաթուղիների կառուցմանը, որին, հասկանալի պատճառներով, հակադրվում է Ռուսաստանը»[2]:

Ըստ այդմ ՝ կարող ենք փաստել, որ

ա. Գերմանացի դիվանագետները քաջ գիտակցում էին, որ առանց Հայկական հարցի լուծման հնարավոր չէ կայունություն ապահովել Թուրքիայում: Սակայն նրանք Հայկական հարցի լուծումը պատկերացնում էին երկրորդական նշանակություն ունեցող բարեփոխումներ իրականացնելու և այդ հարցում ռուսական նախաձեռնությունները խափանելու միջոցով:

բ. Գերմանացիները սկզբունքորեն դեմ լինելով Թուրքիայի մասնատմանը, այնուամենայնիվ չէին բացառում դեպքերի նման ընթացքը և բաժանման պարագայում հայերին դիտում էին որպես հնարավոր դաշնակիցներ Արևելքում իրենց քաղաքականությունն իրականացնելու գործում: Հարկ է նշել նաև, որ նրանց համար չափազանց կարևոր էր այն հարցը, թե Օսմանյան կայսրության փլուզման հետևանքով ստեղծվող անկախ կամ կիսանկախ Արևմտյան Հայաստանը ինչպիսի քաղաքական կողմնորոշում կունենար: Իսկ քանի որ արևմտահայության մեծամասնությունը ռուսամետ կողմնորոշում ուներ, ուստի ինքնուրույն քաղաքական միավորի առաջացումը չէր համապատասխանում Գերմանիայի շահերին:

գ. Հայերի անվտանգությունը ապահովելու պատրվակով գերմանացիները ձգտում էին հայաբնակ շրջաններում իրենց ռազմական ներկայացուցիչներին նշանակել, ինչը ավելի էր ամրապնդում Գերմանիայի դիրքերը տարածաշրջանում: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, գերմանացի զինվորականները ոչ միայն չխոչընդոտեցին Հայոց ցեղասպանության իրականացումը (բացառությամբ հատուկենտ անհատների), այլև երբեմն ուղղակիորեն մասնակից դարձան այդ կոտորածներին:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանում գերմանացի դիվանագետները հայկական տարրի պահպանումը չէին համարում գերմանական շահերին խոչընդոտող գործոն, մինչդեռ շատ հեղինակներ փորձել են հաստատել ճիշտ հակառակը՝ հիմք ընդունելով գերմանացի հայտնի քաղաքագետ Ռորբախի հետևյալ արտահայտությունը. ,…Եթե Թուրքիային հաջողվեր իր մահմեդական բնակչությանը տեղաշարժել դեպի հյուսիս և սահմանակից դարձնել Ռուսաստանի հետ, ապա կձևավորվեր 14-15 միլիոնանոց բնակավայր, որը դիմադրող ահռելի ուժ կդառնար: Եվ քանի որ հայերը խոչընդոտում էին այդ ծրագրի իրագործմանը,

[1] *Նորբերտ Զառուպ, Գերմանական կայսրությունը և Հայկական հարցը (1878-1914), Երևան, 2008, էջ 201*:

[2] *Wolfang Gust, German Responsibility in the Armenian Genocide: A Review of the Historical Evidence of German Complicity. Watertown, MA: Blue Crane Books, 1996, p 304 .*

ապա պետք էր վտարել այդ երկրամասի բնիկ, տեղացի բնակիչներին՝ հայերինե[1]: Անշուշտ, այստեղից չի հետևում, թե նրանք ինչպիսի դիրքորոշում կդրսևորեին Հայկական հարցում՝ Թուրքիայի ամբողջականության պահպանմանը միտված իրենց քաղաքականության դեպքում:

Բալկանյան պատերազմներում Թուրքիան ոչ միայն կորցրեց Եվրոպայում նվաճած իր տարածքներն, այլև կանգնեց ամբողջ կայսրության մասնատման վտանգի առջև, ինչը չէր համապատասխանում նաև Գերմանիայի շահերին: Այդ է պատճառը, որ Բալկանյան պատերազմներից հետո զգալիորեն մեծացավ Գերմանիայի ռազմական աջակցությունը Թուրքիային: Օսմանյան կայսրությունում գտնվող գերմանացի զինվորականները ձգտում էին թուրքական բանակի մարտունակությունը բարձրացնել այն աստիճանի, որ պատերազմի դեպքում ևս կարողանա լուրջ խնդիրներ առաջացնել ռուսական կովկասյան զորքերի համար: Ուշագրավ է, որ եթե Կ.Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմը, որ քաջատեղյակ էր Թուրքիայի ներքին խնդիրներին և բանակի մարտունակությանը, 1914 հուլիսի 18-ին Բեռլին ուղարկած զեկուցագրում ասում էր, թե. ,Թուրքիան այսօր դեռ, անկասկած, լրիվ անընդունակ է դաշինքի: Նա իր դաշնակիցների համար միայն բեռ է դառնալու՝առանց նվազագույն առավելություններ տալու, ապա թուրքերը, ընդհակառակը, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչների մոտ փորձում էին ստեղծել տպավորություն, որ թուրքական բանակն ի վիճակի է լուրջ հարված հասցնելու ռուսական կովկասյան բանակին: 1914 հուլիսի 20-ին Կ.Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին իր զեկուցագրում նշում էր Էնվերի այն միտքը, որ Թուրքիան 20 օրում կարող է 200 հազարանոց լավ զինված զորք տրամադրել, իսկ ավելի ուշ՝100 հազար, որ Թուրքիան ի վիճակի է Ռուսաստանի դեմ հրահրելու Ադրբեջանի մահմեդական ազգաբնակչությանը[2]: Ճշմարտությունն այն է, որ այդ ժամանակ թուրքական բանակը բավականին թույլ էր, և եթե չլիներ Գերմանիայի ցուցաբերած ռազմական աջակցությունը, այն հազիվ կարողանար երկարտև պատերազմ վարել:

Գերմանիայի կառավարական շրջաններում Թուրքիայի նկատմամաբ վերաբերմունքը կտրուկ փոխվեց 1914թ. հունիսի 28-ին Սարաևո քաղաքում սերբական ահաբեկչական կազմակերպության կողմից ավստրիական թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունից հետո, որը առիթ դարձավ, որ 1914 հուլիսի 19-ին (օգոստոսի 1) Գերմանիան պատերազմ հայտարարի Ռուսաստանին, երկու օր հետո՝ Ֆրանսիային, իսկ հաջորդ օրը՝ Անգլիան՝ Գերմանիային[3]: Այսպիսով՝ սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, որը մղվում էր Քառյակ միության (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա, Բուլղարիա) և Անտանտի (Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա, որոնց պատերազմի ընթացքում միացան ԱՄՆ-ը, Ճապոնիան, Իտալիան) միջև:

Այս պայմաններում ընթացող թուրք-գերմանական գաղտնի բանակցություններն ի վերջո հանգեցրին նրան, որ 1914 հուլիսի 27-ի կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին կնքելու ռազմական գաղտնի դաշինք, իսկ 1914 օգոստոսի 2-ին Վանգենհայմը և ավագ վեզիր Սայիդ Հալիմը Էնվեր և Թալեաթ փաշաների ներկայությամբ կնքեցին այն, որով Թուրքիան պարտավորվում էր Ռուսաստանի հարձակման դեպքում աջակցել կայսերական Գերմանիային, իսկ վերջինս իր հերթին պարտավորվում էր չկնքել այնպիսի պայմանագիր, որի հետևանքով Օսմանյան կայսրությունը կարող է ունենալ տարածքային կորուստներ[4]: Ընդամենը մի քանի օր անց՝ օգոստոսի 6-ին, Կ. Պոլսի գերմանական դեսպան Վանգենհայմը Թուրքիայի մեծ վեզիր Մեհմեդ Սայիդ Հալիմ փաշային ուղարկած նամակում հավաստիացնում էր, որ Կայսերական Գերմանյան պատերազմի հաղթանակի դեպքում կաջակցի երիտթուրքերի նվաճողական ծրագրերի իրականացմանը[5]: Նույն օրը՝ օգոստոսի 6-ին, Գերմանիայի և Թուրքիայի միջև կնքվեց լրացուցիչ համաձայնագիր, որն ըստ էության արդյունք էր թուրքական կողմի պահանջի, քանզի նպատակ ուներ պատերազմին գերմանական կողմից մասնակցելու դեպքում ամրապնդելու թուրքերի շահերը, ինչպես նաև ապահովելու Արևելքում նոր տարածքների նվաճումը: Համաձայնագրի հինգերորդ կետում նշվում էր. «Գերմանիան կստիպի

[1] Պ. Ռորբախի այդ հայտարարությունը հրապարակվել է ֆրանսիական «Temps» ազդեցիկ թերթում, որտեղից այն 1916թ. ապրիլի 15-ին արտատպվել է. կովկասի խոսք թերթը (№ 84, էջ 3):

[2] Տե՛ս Օհանջանյան Ա., 1915 թվական.Անհերքելի վկայություններ, Եր., էջ 76:

[3] Տե՛ս Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991, էջ 237:

[4] Տե՛ս Գուստ Վ., Հայերի Ցեղասպանությունը, Աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, Եր., 2002, էջ 142:

[5] Տե՛ս Лудшувейт Е. Ф., Турция в годы первой мировой войны 1914-1918 гг., Военно-политический очерк, М., 1966, с. 47:

ուղղել Օսմանյան կայսրության արևելյան սահմաններն այնպես, որ ապահովի Թուրքիայի անմիջական շփումը Ռուսաստանում ապրող մահմեդական բնակչության հետ»[1]: Պայմանագրում հստակ նշված չէին այն տարածքները, որոնք հաղթանակի դեպքում գերմանացիները կհամաձայնեին, որ անցնեն Թուրքիային: Իսկ դա նշանակում է, որ ելնելով Արևելքում իրենց ունեցած շահերից՝ գերմանացիները խուսափում էին որոշակի ձևակերպումներից և մտադիր չէին հաղթելու պարագայում ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող տարածքները զիջել թուրքերին: Դա ակնհայտորեն դրսևորվեց 1918թ. Բաթումի բանակցությունների ընթացքում: Ի դեպ՝ ասենք, որ օգոստոսի 2-ին Թուրքիայի և Գերմանիայի միջև կնքված համաձայնագրին օգոստոսի 3-ին միացել էր նաև Ավստրո-Հունգարիան, ուստի նույն օրը Թուրքիան հանդես էր եկել իր չեզոքության մասին հայտարարությամբ[2]:

Թուրքիային պատերազմի մեջ ներքաշելու նպատակով Գերմանիան գործի դրեց նաև իր տնտեսական կարողությունները: Այդ է վկայում 1914 հոկտեմբերի 10-ին Կ.Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինի զեկուցագիրը[3]: Բայց անգամ դրամական օգնություն ստանալու դիմաց թուրքական ղեկավարությունը չէր շտապում մտնել պատերազմի մեջ, ինչն էլ ստիպեց, որ Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմը սպառնա, թե գերմանական «Գյոբեն» և «Բրեսլաու» ռազմանավերը, որոնք իբր պատկանում էին Թուրքիային, առանց թուրքական կառավարության համաձայնության Սև ծովում ռազմական գործողություններ կնախաձեռնեն ընդդեմ Ռուսաստանի: Գերմանացիների գործողություններն այնքան ակնհայտ էին, որ դեռևս հոկտեմբերի 17-ին «Հորիզոնե» օրաթերթը գրում էր. «…Եթե Թուրքիան չցանկանա էլ, նրա սկսողները՝ թուրք դրոշակի տակ՝ լինելու են գերմանացիները»[4]: Այս փաստը ևս մեկ անգամ հաստատում է այն իրողությունը, որ Թուրքիան գտնվում էր Գերմանիայի լիակատար հսկողության ներքո, հետևաբար պատերազմի ընթացքում երիտթուրքերի կողմից արևմտահայության նկատմամբ նախապատրաստվող կոտորածներին քաջատեղյակ էին գերմանացի բարձրաստիճան պաշտոնյաները:

Թուրքական կառավարությունը ձգտում էր ստեղծել այնպիսի իրավիճակ, որ առաջինը պատերազմ հայտարարի Ռուսաստանը, որը երիտթուրքերին հնարավորություն կտար հանդես գալու պաշտպանվողի դիրքերից և մահմեդական տարրին ուղղորդելու դեպի «սրբազան պատերազմի»: Սակայն այս հաշվարկները չարդարացան, քանի որ եվրոպական ճակատներում գերմանական բանակների կրած անհաջողությունները գերմանացիներին ստիպեցին ուժեղացնելու ճնշումները երիտթուրքերի վրա, որպեսզի վերջիններս արագացնեն Թուրքիային պատերազմի մեջ ներգրավելու գործընթացը: Այդ ճնշումը դրսևորվում էր ինչպես քաղաքական, տնտեսական, այնպես էլ ռազմական ոլորտներում: Ուստի դեռևս սեպտեմբերի սկզբներին ակնհայտ էր, որ թուրքերը պատրաստվում են պատերազմի, ինչի մասին են վկայում ռուս-թուրքական սահմանին տեղի ունեցած միջադեպերը: Սեպտեմբերի 2-ին Ուրմիայից ստացված հեռագրում ասվում էր, որ պարսկական սահմանագլխի կանոնավոր զորքերը Թուրքիան փոխադրում է Էրզրում: Կաղզվանից մեկ այլ հեռագիր հաղորդում էր ռուսական սահմանագլխում թուրքական զորքերի կենտրոնացման ու պատրաստությունների մասին[5]: Դա նշանակում էր, որ թուրքական կառավարության գերմանամետ ազդեցիկ խմբավորումը պատրաստվում էր երկիրը ներքաշել պատերազմի մեջ, որը ակնհայտ դարձավ արդեն հոկտեմբերի 22-ին, երբ Էնվեր փաշայի հրամանով պաշտոնապես ամրագրվեց գերմանաթուրքական նավատորմի միավորումը: Իսկ ընդամենը մի քանի օր անց՝ 1914թ. հոկտեմբերի 27-ին և 29-ին, թուրքական նավատորմը գերմանացի հրամանատար Սուշոնի ղեկավարությամբ Սև ծովում հարձակվեց ռուսական նավերի վրա և ռմբակոծեց Օդեսա, Սևաստոպոլ, Թեոդոսիա, Նովոռոսիյսկ նավահանգիստները[6]: Նոյեմբերի 2-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային, իսկ նույն ամսի 11-ին սուլթան Մեհմեդ Ֆաթիհը թուրքերին պաշտոնապես պատերազմի կոչ արեց ընդդեմ Ռուսաստանի [7]: Դրանով էլ Կովկասյան ճակատում սկսվեցին ռազմական

[1] *Տե՛ս Կիրակոսյան Զ., նշվ. աշխ., էջ 202:*
[2] *Նույն տեղում, էջ 202:*
[3] *Տե՛ս Օհանջանյան Ա., նշվ. աշխ., էջ 79:*
[4] *Տե՛ս «Հորիզոն», № 230, 17 հոկտեմբերի 1914թ., էջ 1:*
[5] *Տե՛ս «Հորիզոն», № 194, 4 սեպտեմբեր 1914թ., էջ 1:*
[6] *Տե՛ս Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 215:*
[7] *Նույն տեղում, էջ 215:*

ռազմական գործողությունները, որոնք ճակատագրական նշանակություն ունեցան արևմտահայության համար:

Այն փաստը, որ Կայսերական Գերմանիան դրական մոտեցում ցուցաբերեց հայաբնակ նահանգներում բարեփոխումների իրականացման նկատմամբ, ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ նման դիրքորոշումը նախապատերազմյան ժամանակաշրջանում պայմանավորված էր մի քանի գործոններով, որոնցից առաջնայինը արևմտահայության շրջանում ռուսական ավանդական ազդեցության թուլացումն ու գերմանական կողմնորոշման ընդլայնումն էր, հայաբնակ տարածքներում թուրքական տիրապետության ամրապնդումը և Արևմտյան Հայաստանում գերմանական տնտեսական ու քաղաքական ազդեցության մեծացումը: Սակայն պատերազմի նախօրյակին ակնհայտ էր, որ արևմտահայության քաղաքական դիրքորոշումը շարունակում է մնալ ռուսամետ, իսկ Հայկական հարցը շահարկվում էր մեծ տերությունների կողմից: Այդ իսկ պատճառով համաշխարհային պատերազմի նախօրեին գերմանացիների վերաբերմունքն արևմտահայության նկատմամբ առավել բացասական դրսևորում ստացավ, որի մասին է վկայում Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմի՝ դեռևս պատերազմից առաջ հայտնած այն տեսակետը, որ հայերը պետք է ընդունեն իսլամ, միայն այդ դեպքում նրանց հանգիստ կթողնեն [1]:

Այսպիսով՝ գերմանացի բարձրաստիճան պաշտոնյաների այս և նամանատիպ հայտարարությունները վկայում են, որ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին երիտթուրքերը մշակել-պատրաստել էին արևմտահության տեղահանման հրեշավոր ծրագիրը, որին քաջատեղյակ էին գերմանացիները, որոնք հետագայում ոչ միայն չփորձեցին խոչընդոտել, այլև մասամբ գործուն մասնակցություն ունեցան այդ ոճրագործության կազմակերպմանն ու իրականցմանը:

Արտասահմանյան, ինչպես նաև խորհրդային որոշ պատմաբանների աշխատություններում գերմանական իշխանությունների վերաբերմունքը պանթուրքիստական ծրագրերի և մասնավորապես Հայոց ցեղասպանության վերաբերյալ այնպես է ներկայացվում, թե իբր գերմանացիներն են հղացել, մշակել և եռանդուն կերպով աջակցել դրա իրականացմանը: Նման պնդումները որևէ փաստարկված հիմնավորումներ չունեն և լոկ անհիմն ենթադրություններ են, քանի որ հայերի տեղահանության ու կոտորածների ծրագրին երիտթուրքերը հետամուտ էին դեռևս 1911 թ., երբ Սալոնիկում կայացած երիտթուրքերի խորհրդակցության ժամանակ որոշում ընդունվեց հայության բնաջնջման վերաբերյալ, և միայն նպաստավոր իրադրության էին սպասում, այն իրականցնելու համար: Այլ հարց է, որ Կայսերական Գերմանիան՝ որպես Թուրքիայի գլխավոր դաշնակից, աշխարհամարտում ամեն գնով հաղթելու և Մերձավոր Արևելքում իր շահերից ելնելով, ինչպես նաև, քաջատեղյակ լինելով պանթուրքական ծրագրերին, ոչինչ չարեց դրանց կանխման համար, անգամ որոշ դեպքերում գործնական աջակցություն ցուցաբերեց այդ ծրագրերի իրականացմանը: Գոյություն ունեն բազմաթիվ փաստեր, որոնք հաստատում են, որ նախքան Կայսերական Գերմանիայի հետ Թուրքիայի դաշնակցելը, հայերի տեղահանության և կոտորածների վերաբերյալ երիտթուրքերն արդեն որոշում էին ընդունել: Օսմանյան Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուն իր հուշերում գրել է, որ թուրք բարձրաստիճան պաշտոնյաներից մեկն իրեն ասել էր, թե հայերին տեղահանելու հարցի հետ կապված երիտթուրքերը մի քանի գաղտնի խորհրդակցություններ են ունեցել և դեռևս 1914 թ. գարնանը որոշվել է իրականացնել այդ ծրագիրը[2]:

Տեղեկություններ հեղինակի մասին

Կարինե Հովսեփյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրոս
E-mail: Karine.hovsepyan.1985@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ. Ավանեսյանը:
ՀՏԴ 32.019.5(479.243) *Քաղաքագիտություն*

ԼՂՀ ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ

[1] *Տե՛ս Степанян Ст., Германские источники о геноциде армян, Ереван, 1991 г., էջ 63*
[2] *Տե՛ս Morgenthau H., The Tragedy of Armenia, The Murderos Tyranny of the Turks, London, 1917, էջ 6:*